ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 16.06.2017թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ՍՑ-ԱՄ-2017/08

ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ նաև՝ Խորհուրդ) ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 22.05.2017թ. թիվ 03/73-3/8986-17 գրությամբ «Ինգլիշ թրեյդ հաուզ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ բնապահպանության նախարարության 07.05.2017թ. թիվ 5/06.2/50920-17 գրության հիման վրա, 22.05.2017թ. թիվ 03/73-3/8986-17 գրությամբ Խորհրդում նախաձեռնել է «Ինգլիշ թրեյդ հաուզ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ Ցուցակ) ներառելու պաշտոնական ընթացակարգ:

2. «Ինգլիշ թրեյդ հաուզ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

«Ինգլիշ թրեյդ հաուզ» ՍՊԸ-ն 24.05.2017թ. գրությամբ, հայտնել է որ մասնակցել է ՀՀ բնապահպանության նախարարության (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված «ՇՀԱՊՁԲ-15/6 (ՀՀ-ԲՆ-ԱՊՁԲ-17/07)» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին (այսուհետ՝ Ընթացակարգ) և զբաղեցրել է 2-րդ տեղ, այնուհետև անհրաժեշտություն է առաջացել ներկայացնել առաջարկվող ապրանքի (75W90 փոխանցման տուփի յուղ) անվանումը և տեխնիկական բնութագիրը, սակայն Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից մերժվել է «Ինգլիշ թրեյդ հաուզ» ՍՊԸ-ի հայտը՝ այն հիմնավորմամբ, որ Ընկերության կողմից ներկայացված ապրանքի տեխնիկական բնութագիրը չի համապատասխանում հրավերով նախատեսված պահանջներին:

«Ինգլիշ թրեյդ հաուզ» ՍՊԸ-ն գտնում է, որ Ընկերության կողմից ներկայացված տեխնիկական բնութագիրը համապատասխանում է Պատվիրատուի կողմից նշված ապրանքի տեխնիկական բնութագրի պահանջներին, քանի որ ՀՀ բնապահպանության նախարարության կողմից պահանջվել է, որ նյութի խտությունը 15°C-ի դեպքում լինի 0,865-0,870, սակայն տարբեր ընկերությունների նույնատիպ 75W90 տեսակի յուղի տեխնիկական բնութագրերում նյութի խտությունը 15°C-ի դեպքում տարբեր է, օրինակ՝ MOBIL- 0,859, TOTAL-0,866, CASTROL-0,866 և MANNOL-0,882, այսինքն՝ նմանատիպ տարբերությունը չի կարող համարվել թերություն կամ անհամապատասխանություն, քանի որ բոլոր հիշատակված և այլ ընկերությունների արտադրանքը հավաստագրվում է միջազգային ստանդարտացման ինստիտուտների կողմից:

Ամփոփելով վերոգրյալը, Ընկերությունը հայտնել է, որ «Ինգլիշ թրեյդ հաուզ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն, քանի որ Ընկերությունը ունի տասնվեց տարվա աշխատանքային փորձ և մասնագիտական գիտելիքներ: Նմանատիպ մրցույթներին մասնակցել և հաղթող է ճանաչվել բազմիցս և պատվիրատուների կողմից չի եղել առարկության որևէ դեպք կապված մատակարարվող ապրանքների և բնութագրերի կամ որակական հատկանիշների հետ:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 02.06.2017թ. ժամը 11:00-ի նիստի վերաբերյալ, տնօրենը ապահովել է իր մասնակցությունը, ով պնդել է 24.25.2017թ. գրությամբ Խորհրդին հայտնած դիրքորոշումը :

3. <u>ՀՀ բնապահպանության նախարարության կողմից ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը</u>

ՀՀ բնապահպանության նախարարությունը 07.05.2017թ. թիվ 5/06.2/50920-17 գրությամբ ներկայացրել է ՀՀ բնապահպանության նախարարության կարիքների համար ավտոպահեստամասերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՇՀԱՊՁԲ-15/6 (ՀՀ-ԲՆ-ԱՊՁԲ-17/07)» ծածկագրով ընթացակարգին վերաբերող անհրաժեշտ փաստաթղթերը:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 02.06.2017թ. ժամը 11:00-ի նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով հայտնել է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, մերժելով Ընկերության հայտը, գործել է իրավաչափ, քանի որ Ընկերության կողմից ներկայացված ապրանքի տեխնիկական բնութագիրը չի համապատասխանում Ընթացակարգի հրավերով նախատեսված պահանջներին:

4. <u>ՍՑ-ԱՄ-2017/08 պաշտոնական ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>

ՍՑ-ԱՄ-2017/08 պաշտոնական ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ բնապահպանության նախարարության կարիքների համար ավտոպահեստամասերի ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՇՀԱՊՁԲ-15/6 (ՀՀ-ԲՆ-ԱՊՁԲ-17/07)» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով, ի թիվս այլ մասնակիցների, հայտ է ներկայացրել «Ինգլիշ թրեյդ հաուզ» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի հրավերի ՄԱՍ II-ի 3-րդ կետը սահմանում է հետևյալը.

«3.1 Սույն հրավերով նախատեսված որակավորման չափանիշները հավաստելու և սույն հրավերի 4.3 կետով նախատեսված տեղեկատվությունը տրամադրելու համար առաջին տեղ զբաղեցրած Մասնակիցը Պատվիրատուի էլեկտրոնային փոստին gnumner.mnp@yandex.ru է ուղարկում սույն հրավերի Հավելված №5-ով նախատեսված գրությունը, որին կցվում է ***առաջարկվող ապրանքի անվանումը և տեխնիկական բնութագրերը***:

3. Ընկերությունը հայտի 4.1 հավելվածով՝ առաջարկվող ապրանքի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրին համապատասխանության վերաբերյալ հայտարարությամբ, հայտնել և հավաստել է, որ «ՇՀԱՊՁԲ-15/6 (ՀՀ-ԲՆ-ԱՊՁԲ-17/07)» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում իր կողմից ներկայացված հայտով առաջարկվող՝ 18-րդ չափաբաժնում նշված ապրանքի տեխնիկական բնութագիրը համապատասխանում է «ՇՀԱՊՁԲ-15/6 (ՀՀ-ԲՆ-ԱՊՁԲ-17/07)» ծածկագրով ընթացակարգի հրավերով նախատեսված ապրանքի տեխնիկական բնութագրին:

Ընդ որում՝ 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում «Ինգլիշ թրեյդ հաուզ» ՍՊԸ-ն պարտավորվել է ներկայացնել իր կողմից հաստատված՝ հայտով առաջարկված ապրանքի անվանումը և տեխնիկական բնութագիրը:

4. Ընթացակարգի հրավերին կից պայմանագրի նախագծի անբաժանելի մասը կազմող Հավելված N 1-ի՝ տեխնիկական բնութագրի (այսուհետ նաև՝ Տեխնիկական բնութագիր), 18-րդ չափաբաժնով՝ «Փոխանցման տուփի յուղ» գնման առարկայի համար սահմանվել է Շելլ GL-4 կամ GL-5 կամ համարժեք, SAE 75W-90, խտությունը 15°C պայմաններում՝ 0.865-0.870 գ/մլ, կինեմատիկ մածուցիկությունը 100°C պայմաններում՝ 13.9-14.2 մմ2/վրկ, կինեմատիկ մածուցիկությունը 40°C պայմաններում՝ 64.0-64.5 մմ2/վրկ, մածուցիկության գործակիցը՝ 170-200, բռնկման ջերմաստիճանը ոչ պակաս 180°C, մածուցիկության հատկության կորուստը -45°C ցածր: Չափածրարված 1 լիտրանոց տարաներով:

5. «Ինգլիշ թրեյդ հաուզ» ՍՊԸ-ն Ընթացակարգի հրավերի Հավելված N 5-ով Տեխնիկական բնութագրի 18-րդ չափաբաժնի համար առաջարկել է՝ «MANNOL Extra Getriebeol 75W-90 GL-4/GL-5 LS», խտությունը 15°C պայմաններում՝ 0.882 գ/մլ, կինեմատիկ մածուցիկությունը 100°C պայմաններում՝ 16,49 մմ2/վրկ, կինեմատիկ

մածուցիկությունը 40°C պայմաններում՝ 102,85 մմ²/վրկ, մածուցիկության գործակիցը՝ 174, բռնկման ջերմաստիճանը ոչ պակաս 210°C, մածուցիկության հատկության կորուստը -46°C ցածր:

6. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 13.04.2017թ. ժամը 14:30-ի նիստի թիվ 6 արձանագրության 3.2.2 կետով «Ինգլիշ թրեյդ հաուզ» ՍՊԸ-ն ճանաչվել է հաջորդ տեղ զբաղեցրած մասնակից՝ Ընթացակարգի 18-րդ չափաբաժնի մասով, և սահմանված կարգով ծանուցվել է երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել Ընթացակարգի հրավերի 2-րդ մասի 3.1 կետով նախատեսված փաստաթղթերը՝ Հրավերի Հավելված 5-ով առաջարկված գրությունը, որին անհրաժեշտ է կցել առաջարկվող ապրանքի անվանումը և տեխնիկական բնութագիրը:

7. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 19.04.2017թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 7 արձանագրության 2.2.1 կետով կայացված որոշմամբ, հիմք ընդունելով «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի թիվ 168-Ն որոշման 52-րդ կետի 2-րդ ենթակետը, ինչպես նաև Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 8.1.3 կետի 2-րդ ենթակետը, մերժել է Ընկերության հայտը Ընթացակարգի 18-րդ չափաբաժնի մասով՝ այն հիմնավորմամբ, որ Ընկերության կողմից ներկայացված ապրանքի տեխնիկական բնութագիրը չի համապատասխանում հրավերով նախատեսված պահանջներին:

5. <u>Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը</u>

Խորհուրդն, ուսումնասիրելով << ֆինանսների նախարարության 22.05.2017թ. թիվ 03/73-3/8986-17 գրությունը, << բնապահպանության նախարարության 07.05.2017թ. թիվ 5/06.2/50920-17 գրությունը՝ կից փաստաթղթերով, հայտնում է հետևյալը.

Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, ***եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում գնման գործընթացի շրջանակում ներկայացրել է կեղծ տվյալ:***

Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: ***Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված***

պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Նույն հոդվածի 5-րդ մասը սահմանում է, որ առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո՝ հրավերով սահմանված ժամկետում՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ ***գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):***

Օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետի համաձայն՝ << գնումների բողոքարկման խորհուրդն իրավունք ունի որոշում կայացնելու մասնակցին գնումների գործընթացին մասնակցության իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար:

<< կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 35-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է, որ ***մասնակիցը հայտով ներկայացնում է ապրանքների գնման դեպքում իր կողմից հաստատված հայտարարություն՝ առաջարկվող ապրանքի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ, պայմանով, որ 1-ին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում ներկայացնում է նաև առաջարկվող ապրանքի անվանումը և տեխնիկական բնութագրերը:***

Կարգի 51-րդ կետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացրած որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 35-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում ***հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցին առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:***

Կարգի 52-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝ ***չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:***

Ընթացակարգի հրավերի ՄԱՍ II-ի 3-րդ կետը սահմանում է հետևյալը.

«3.1 Սույն հրավերով նախատեսված որակավորման չափանիշները հավաստելու և սույն հրավերի 4.3 կետով նախատեսված տեղեկատվությունը տրամադրելու համար առաջին տեղ զբաղեցրած Մասնակիցը Պատվիրատուի էլեկտրոնային փոստին gnumner.mnp@yandex.ru է ուղարկում սույն հրավերի Հավելված №5-ով նախատեսված գրությունը, որին կցվում է ***առաջարկվող ապրանքի անվանումը և տեխնիկական բնութագրերը***:

Ընկերությունը հայտի 4.1 հավելվածով՝ առաջարկվող ապրանքի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրին համապատասխանության վերաբերյալ հայտարարությամբ, հայտնել և հավաստել է, որ «ՇՀԱՊՁԲ-15/6 (ՀՀ-ԲՆ-ԱՊՁԲ-17/07)» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում իր կողմից ներկայացված հայտով առաջարկվող՝ 18-րդ չափաբաժնում նշված ապրանքի տեխնիկական բնութագիրը համապատասխանում է «ՇՀԱՊՁԲ-15/6 (ՀՀ-ԲՆ-ԱՊՁԲ-17/07)» ծածկագրով ընթացակարգի հրավերով նախատեսված ապրանքի տեխնիկական բնութագրին:

Ընդ որում՝ 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում «Ինգլիշ թրեյդ հաուզ» ՍՊԸ-ն պարտավորվել է ներկայացնել իր կողմից հաստատված՝ հայտով առաջարկված ապրանքի անվանումը և տեխնիկական բնութագիրը:

Ընթացակարգի հրավերին կից պայմանագրի նախագծի անբաժանելի մասը կազմող Հավելված N 1-ի՝ տեխնիկական բնութագրի, 18-րդ չափաբաժնով՝ «Փոխանցման տուփի յուղ» գնման առարկայի համար սահմանվել է ***Շելլ GL-4 կամ GL-5 կամ համարժեք, SAE 75W-90, խտությունը 15°C պայմաններում՝ 0.865-0.870 գ/մլ, կինեմատիկ մածուցիկությունը 100°C պայմաններում՝ 13.9-14.2 մմ2/վրկ, կինեմատիկ մածուցիկությունը 40°C պայմաններում՝ 64.0-64.5 մմ2/վրկ, մածուցիկության***

գործակիցը՝ 170-200, բռնկման ջերմաստիճանը ոչ պակաս 180°C, մածուցիկության հատկության կորուստը -45°C ցածր: Չափածրարված 1 լիտրանոց տարաներով:

«Ինգլիշ թրեյդ հաուզ» ՍՊԸ-ն Ընթացակարգի հրավերի Հավելված N 5-ով Տեխնիկական բնութագրի 18-րդ չափաբաժնի համար առաջարկել է՝ ***«MANNOL Extra Getriebeol 75W-90 GL-4/GL-5 LS», խտությունը 15°C պայմաններում՝ 0.882 գ/մլ, կինեմատիկ մածուցիկությունը 100°C պայմաններում՝ 16,49 մմ2/վրկ, կինեմատիկ մածուցիկությունը 40°C պայմաններում՝ 102,85 մմ²/վրկ, մածուցիկության գործակիցը՝ 174, բռնկման ջերմաստիճանը ոչ պակաս 210°C, մածուցիկության հատկության կորուստը -46°C ցածր:***

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 19.04.2017թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 7 արձանագրության 2.2.1 կետով կայացված որոշմամբ, հիմք ընդունելով «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի թիվ 168-Ն որոշման 52-րդ կետի 2-րդ ենթակետը, ինչպես նաև Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 8.1.3 կետի 2-րդ ենթակետը, ***մերժել է Ընկերության հայտը Ընթացակարգի 18-րդ չափաբաժնի մասով*** այն հիմնավորմամբ, որ Ընկերության կողմից ***ներկայացված ապրանքի տեխնիկական բնութագիրը չի համապատասխանում հրավերով նախատեսված պահանջներին:***

Այսպիսով, Խորհուրդը գտնում է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը մերժելով «Ինգլիշ թրեյդ հաուզ» ՍՊԸ-ի հայտը, գործել է իրավաչափ, քանի որ «Ինգլիշ թրեյդ հաուզ» ՍՊԸ-ի կողմից Ընթացակարգի հրավերի 18-րդ չափաբաժնի համար առաջարկված ապրանքի տեխնիկական բնութագիրը՝ ***«MANNOL Extra Getriebeol 75W-90 GL-4/GL-5 LS», խտությունը 15°C պայմաններում՝ 0.882 գ/մլ, կինեմատիկ մածուցիկությունը 100°C պայմաններում՝ 16,49 մմ2/վրկ, կինեմատիկ մածուցիկությունը 40°C պայմաններում՝ 102,85 մմ²/վրկ, մածուցիկության գործակիցը՝ 174, բռնկման ջերմաստիճանը ոչ պակաս 210°C, մածուցիկության հատկության կորուստը -46°C ցածր,*** չի համապատասխանում Ընթացակարգի հրավերի 18-րդ չափաբաժնով պահանջվող՝ ***Շելլ GL-4 կամ GL-5 կամ համարժեք, SAE 75W-90, խտությունը 15°C պայմաններում՝ 0.865-0.870 գ/մլ, կինեմատիկ մածուցիկությունը 100°C պայմաններում՝ 13.9-14.2 մմ2/վրկ, կինեմատիկ մածուցիկությունը 40°C պայմաններում՝ 64.0-64.5 մմ2/վրկ, մածուցիկության գործակիցը՝ 170-200, բռնկման***

ջերմաստիճանը ոչ պակաս 180°C, մածուցիկության հարկության կորուստը -45°C ցածր: Չափածրարված 1 լիտրանոց տարրաներով, ապրանքի տեխնիկական բնութագրին:

Ելնելով վերոգրյալից՝ Խորհուրդն արձանագրում է, որ Ընկերության կողմից հայտի թիվ 4.1 հավելվածով ներկայացված հայտարարությունը հանդիսանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված կեղծ տվյալի ներկայացում:

Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե ***հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում գնման գործընթացի շրջանակում ներկայացրել է կեղծ տվյալ:***

Այսպիսով, Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում մասնակցին ներառելու համար **պարտադիր և միաժամանակյա առկա հիմքերն** են՝

- *նույն կետի «բ» ենթակետերով նախատեսված և մասնակցին վերագրվող խախտման առկայությունը,*
- *խախտումը թույլ տալու պահից մեկ տարվա ընթացքում մասնակցի կողմից մրցակցային գործընթացին մասնակցելու համար հայտ ներկայացրած լինելու հանգամանքը:*

Հետևաբար, Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում «Ինգլիշ թրեյդ հաուզ» ՍՊԸ-ին ներառելու համար անհրաժեշտ է, որ նույն կետով սահմանված և ***Ընկերությանը վերագրվող խախտում թույլ տալու պահից մեկ տարվա ընթացքում անձը մասնակցած լինի գնման որևէ գործընթացին և ներկայացրած լինի հայտ***, քանի որ օրենքի նշված նորմի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե վերագրվող խախտումը կատարվել է հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում:

Խորհուրդն արձանագրում է, որ «Ինգլիշ թրեյդ հաուզ» ՍՊԸ-ի վերաբերյալ դեռևս առկա է Ցուցակում ներառելու միայն մեկ հիմքը, այն է ***Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի***

4-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված և վերջինիս վերագրվող խախտման առկայությունը, քանի որ սույն որոշումը կայացնելու օրվա դրությամբ առկա չէ որևէ տեղեկատվություն «Ինգլիշ թրեյդ հաուզ» ՍՊԸ-ի կողմից խախտումը թույլ տալու օրվանից՝ 04.04.2017թ., հաշված մեկ տարվա ընթացքում հայտ ներկայացնելու վերաբերյալ:

«Ինգլիշ թրեյդ հաուզ» ՍՊԸ-ին Ցուցակում ներառելու որոշում կարող է կայացվել միայն երկրորդ պարտադիր հիմքի՝ ***խախտումը թույլ տալու պահից մեկ տարվա ընթացքում մասնակցի կողմից հայտ ներկայացնելու հանգամանքն*** ի հայտ գալու հանգամանքներում:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Խորհուրդը գտնում է, որ ՀՀ ֆինանսների նախարարության 22.05.2017թ. թիվ 03/73-3/8986-17 գրությամբ ներկայացված «Ինգլիշ թրեյդ հաուզ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 02550253) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության 22.05.2017թ. թիվ 03/73-3/8986-17 գրությամբ «Ինգլիշ թրեյդ հաուզ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 02550253) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման
խորհրդի անդամ՝ ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ